



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 10 ՅՈՒՆԻՍ, 2018

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս լիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 103

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

Օրհնարանէ Տէրը, ով իմ անձս,
 եւ մի՛ մոռնար անոր բոլոր պարգեւները:
 Ան է որ կը բաւէ բոլոր մեղքերդ,
 կը բժշկէ բոլոր հիւանդութիւններդ:
 Ան է որ կեանքդ կը փրկէ կորուստէն,
 եւ իր սիրովն ու գթութեամբը կը պարուրէ բեզ:
 Ինչպէս հայր մը կը գուրգուրայ իր զաւակներուն վրայ,
 այնպէս Տէրը կը գուրգուրայ իրմէ ակնածողներուն վրայ,
 որովհետեւ ինք լաւ գիտէ մեր կազմուածքը,
 եւ չի մոռնար որ հողեղէն ենք:
 Արդարեւ մարդուս կեանքը խոտի կը նմանի,
 կը ծաղկի այնպէս՝ ինչպէս վայրի ծաղիկը.
 Երբ խորշակը անոր վրայ կը փչէ՝
 այ կը դադրի գոյութիւն ունենալէ, անոր տեղն իսկ չես գիտնար:
 Սակայն Տիրոջ հոգածութիւնը անվախնան է,
 անոր արդարութիւնը մշտական է իրմէ ակնածողներուն հանդէպ,
 անոնց հանդէպ՝ որոնք իր ուխտին հաւատարիմ են,
 եւ չեն մոռնար գործադրել իր հրահանդները:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենատուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
 աջ քո հովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ Ա ՆԱՄԱԿ
ԳԼՈՒԽ 3:1-3

ՄԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐՂԻՆԵՐՆ ԵՆՔ (3:1-3)

Շարունակելով Յովհաննէս Առաքեալ իր ընդհանրական նամակը, ուր կը ներկայացնէր թէ ով է իսկական ու հարազատ գաւակը Աստուծոյ՝ «Ան, որ արդարութիւն կը գործէ» (29 հմր):

Մկրտութեան ճամբով մենք դարձանք որդեգիր գաւակները Աստուծոյ, վերստին ծնելով ջուրէն եւ հոգիէն, որուն կ'անդրադառնայ Քրիստոս երբ առիթով մը Նիկողէմոս հարց փուսա ըսելով, թէ արդեօք ինչ պէտք է ընել յաւիտենական կեանքը ժառանգելու համար (Յովհ 3): Այսպէղ նամակի շարունակութեան մէջ, Յովհաննէս Առաքեալ կը ներկայացնէ այն հիմնական կէտերը Աստուծոյ հարազատ գաւակները ըլլալու: Միւս կողմէ նաեւ կը ներկայացնէ այն սէրը որով Աստուած սիրեց մեզ: Աստուած ինչպիսի սիրով սիրեց եթէ ոչ աշխարհը դրկելով Իր միածինը՝ Յիսուս Քրիստոսը:

Ինչ են այն նշանները Աստուծոյ հարազատ գաւակներ ըլլալու:

1. Աստուծմէ ծնած ըլլալը, Աստուած որպէս Հայրը, եւ մենք Անոր որդեգիր գաւակները: Աստուծոյ գաւակ ըլլալը կախում չունի ուր ծնած ենք, ինչպիսի ընթացիկ մէջ ծնած ենք: Աստուծոյ գաւակ ըլլալը կախում չունի ինչ ազգի կը պատկանինք: Ուրեմն, ի՞նչպէս կրնանք Աստուծոյ որդեգիր գաւակները ըլլալ, եթէ ոչ նոյնինքն Աստուծոյ նախաձեռնութեամբ, Աստուծոյ սրբազան գործութեամբ, այլ խօսքով՝ Աստուծոյ Սուրբ Հոգիի գործութեամբ: Քրիստոս պարասխանելով Նիկողէմոսի հարցումին, պիտի ըսէ՝ «մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի» (Յովհ 3): Ահա այդ որդեգրութեան պայմանը Աստուծոյ սէրն է, Իր իսկ նախաձեռնութեամբ:
2. Աստուծոյ որդեգիր գաւակ ըլլալը նաեւ անով մեզի փրկած է անուն: Ինչպէս նորածին երեխայի պարագային կու փանք անոր անուն մը: Այս պարագային ալ Աստուծոյ որդեգիր գաւակ ըլլալու հանգամանքին մեօ մեզի կը փրկի անուն մը: Այս պարագային քրիստոնէայ անուանումը:
3. Աստուծոյ որդեգիր գաւակ ըլլալու հանգամանքը նաեւ մեր վերաբերմունքին մէջ, արդարութիւն գործելու: Ուրեմն, արդարութիւն գործելը արդէն կ'ենթադրէ Աստուծմէ ծնած ըլլալը: Որովհետեւ մարդը իր ծնունդով արդարութիւն չի կրնար գործել: Ինչպէս պիտի ըսէ Ծննդոց գիրքին մեօ Տէրը, մարդը իր ծնունդէն չար է: Այսինքն չունի արդարութիւն գործելու այդ վիճակը: Ուստի երբ Աստուծոյ որդեգիր գաւակներ կը դառնանք, այն արեւն նաեւ արդարութիւն գործելու, որովհետեւ Ինք արդար է, ուրեմն Իրմէ ծնածներն ալ արդարութիւն է որ պէտք է գործեն:

Ահա ճիշդ այդ իսկ պարճառով աշխարհը մեզ չի ճանչնար, կ'ըսէ Առաքեալը, որովհետեւ չճանչցաւ զայն: Ո՛վ: Յիսուս Քրիստոսին: Նոյնը պիտի ըսէր Քրիստոս: Ձեզ պիտի մերժեն, որովհետեւ զիս մերժեցին: Ձեզ պիտի հալածեն, որովհետեւ զիս հալածեցին: